ՓՈՒՆՋ

ԹԻՒ 1208 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ — 1877 ՍԵՊՏԵՄԲԵՐ 7

ԱԶԳԱՅԻՆ

Հարկաւ մեղի հետ գոհ և ուրախ պիտի ըլլան դաստիարակութեան յառաջադիմութեան փափաքող ամեն ազգայինք, երբ լսեն, թէ Ռուսական խորհուրդը այս օրերս Հիւնքեարպէ յէնտեան արժ. Տ. Յովհաննէս քահանայի պաշտօն յանձներ է՝ մայրաքաղաքիս վարժարանները շրջագայիլ, նոցա ընթացից ու վիճակին վրայ դիտողութիւն ընել հոգաբարձութեանց և տեղեկութիւն տանիլ Ռուսական խորհրդոյն։

Եւ որովհետև տակաւին կեդրոնական սնտուկին հաշուէկշռին խնդիրն ազգային ժողովոյ բովէն դուրս ելած չէ, և դաստիարակութեան համար որոշեալ որևէ դումար չկայ, Ռուսական խորհուրդը միանգամայն որոշեր է՝ որ մինչև ցկարգադրութիւն հաշուէկշռին, թաղական սնտուկները վճարեն յիշեալ տեսչին ամսականը՝ իւրաքանչիւր իւր կարողութեան համաձայն։ Օրինակի համար Պէշիկթաշի թաղային սնտուկը պիտի վճարէ մէկ 100նոց թղթադրամ յամսէ ամիս։

Քանի մը տարի յառաջ ալ Ռուսական խորհուրդ մը այս կարգադրութիւնը բրաւ, և Միքայէլեան Սիմոն էֆէնտիի յանձնեց տեսչութեան գործը. սակայն նա հազիւ փոքր մի ժամանակ շարունակեց՝ որովհետև կեդրոնական սընտուկը չկրցաւ կանոնաւոր կերպիւ վճարել որոշեալ վարձքը։ Տարակոյս չկայ, թէ Հիւնքեարպէ յէնտեան Հայրն ալ պիտի ստիպուի դադարիլ պաշտօնավարութենէն, երբ թաղական կամ կեդրոնական սնտուկները դադարին հատուցանել իրենց պարտքը կամ տարաժամ ու անկանոն կերպիւ հատուցանեն։

Սակայն, դրամի խնդրէն զատ նկատողութեան արժանի կէտ մ՚ալ կայ այս մասին, որ առաջին անդամուն ալ բրած եմք, և անհրաժեշտ հարկ է որ այս անդամ ալ նկատողութեան առնումք։ Արդարև Հիւնքեարպէ յէնտեան Հայրն շատ արժանի է այս պաշտօնին՝ իւր հմտութեամբն և ուրիշ յատկութիւններովը. բայց չկրնար միայն ինքն վարել. չկրնար մայրաքաղաքիս 40ի չափ ազգային վարժարանները շրջագայիլ, և ամեն մէկուն գոնէ շաբաթն անդամ մը մէկերկու ժամ այցելել։ Ուստի հարկ է որ գոնէ ուրիշ երկու անձինք ալ—Հիւնքեարպէյէնտեան Հօր արժանեաց տէր անձինք—ընտրուին, և իւրաքանչիւրին համար շրջագայութեան ու այցելութեան սահման որոշուի։ Եթէ այսպէս չըլլայ, ու մէկ անձի վրայ միայ՝ տեսչութենէն ակընկալեալ օգուտն ու արդիւնքը խիստ անբաւական՝ կամ աւելի ճիշդն ըսելով՝ ոչինչ կըլլայ։ Այս դիտողութիւնը միայն մեք չեմք ըներ. արդէն թաղական խորհրդականաց ոմանց կողմանէ ալ լսեցինք. շատ իրաւացի է, և արժան է, որ Ռուսական խորհուրդն ուշադրութեան առնելով՝ պարտուպատշաճը տնօրինէ։

—

Պատրիարքարանը Տրապիզոնի դեր. Առաջնորդէն իմանալով, թէ Սօխումգալէի կողմերէն այս անդամ Տաճկաստան գաղթող ընտանեաց մէջ Հայազգիք ալ կգտնուին, և թէպէտ ազգային լեզուն կորուսած են դժբաղդաբար, բայց իրենց անուններն և փոքր ի շատէ ալ կրօնքն պահած են, — հրահանգ ղրկեր է առաջնորդարանին, որ յատկապէս խնամ տանի այդ խեղճերուն։ Արդէն լսած էինք, թէ Հայեր կգտնուին այդ գաղթականաց մէջ, և թէ՝ իրենց հայկական անուններն, երեսնին խաչակնքելն, և ոմանց ալ պարանոցը գըտնուած խաչերն են՝ Հայութեան ու Քրիստոնէութեան մնացորդ նշաններն։

—

Յունաց Ս. Պատրիարքին կողմանէ երկու Մետրապոլիտ երէկ Գումգափուի Պատրիարքարանը գալով՝ ի դիմաց Նորին սրբազնութեան շնորհաւորեցին մեր Ս. Պատրիարքը, Օսմանիյէ պատուանշան շնորհուելուն համար։

Պատրիարքն անձամբ պիտի դայ եղեր, բայց անձնական տկարութեան պատճառաւ չէ կրցեր գալ։

Մեր Ս. Պատրիարքը՝ թէև քիչ մը անձնապէս տկար՝ բայց ներկայ դտնուեցաւ Պատրիարքարանը, և արժանավայել յարգանօք ընդունեցաւ զանոնք։

—

Ինչպէս նախորդ թերթով ծանուցինք՝ ազգային ժողովոց ատենապետները շաբաթ օրը բարձրապատիւ մեծ Եպարքոսին ապարանքն երթալով՝ ի դիմաց ազգին օգոստ. Սուլթանին մատուցանելի ուղերձը յանձնեցին Նորին բարձրութեան։

Բարձրապատիւ մեծ Եպարքոսն խոստացեր է՝ Նորին վեհափառութեան մատուցանել, և այս առթիւ բարեհաճեր է յայտարարել թէ «Համայն Ազգն Հայոց, իւր Պատրիարքովն հանդերձ, թէ՝ օգոս. Սուլթանին և թէ՝ իւր կառավարութեան համակրութիւնն ու վստահութիւնը գրաւած են, թէ՝ Պատրիարքին ստացած Օսմանիյէ պատուանշանը իւր իմաստութեանն ու արժանեացը հետ բաղդատմամբ շատ քիչ է, և թէ՝ Հայոց Ազգը բարերաղդ համարելու է ինքզինքն՝ այսպիսի արժանաւոր և խոհական գլուխ մ՚ունենալուն համար»։

Նորին բարձրութիւնը միանգամայն յարեր է թէ, «Օսմանեան զինուց յաղողութեան համար Պատրիարքին ըրած ջերմ բարեմաղթութիւնք ընդունելի եղած են առաջի Աստուծոյ, և օսմանեան զէնքերն նշանաւոր յաղթութիւններով ու յաջողութեամբ փառաւորուիլ սկսած են. ուստի, կապահովցուներմ զձեզ, որ շնորհիւն Աստուծոյ քանի մ՚օրէն ամեն բան կարգադրուելով՝ խաղաղութիւնն ու անդորրութիւնը պիտի վերահաստատուին»։

—

Խիստ մեծ հաճութեամբ կօրինակեմք՝ Իզմիրի Արշալոյս լրագրոյն հետևեալ տողերը։

«Սբարդալբեան մահտեսի Յակոբ էֆէնտի և մահտեսի Յովհաննէս էֆէնտի վսեմա. եղբարք՝ յազգասիրական վեհ զգացմանց շարժեալ, սկիզբն արարին շինութեան ազգային հիւանդանոցին քաղաքիս՝ որ յոյժ փոքրիկ էր և՝ ի խախուտ վիճակի կըգտնուէր։ Իսկ այժմ, ինչպէս կը հաւաստեն մեզ, նոցին ծախիւք՝ ի հիմանց փլուելով՝ երկայարկ հոյակապ շէնք մի պիտի կառուցուի՝ բաղկացեալ յ՚30 սենեկաց։

«Սիրելի է մեզ յուսալ թէ այս բարեգործական մեծ շինութիւնն՝ բաց՝ ի նախանձաւորութեան բարի օրինակ լինելոյ ազգային երևելի քաղաքակցաց մերոց, սկզբնաւորութիւնն պիտի լինի ազգասիրական ուրիշ գլխաւոր շինութեանց զորս վսեմաշուք Սբարդալբեան միտք ունին ընելու՝ ի փառս Աստուծոյ և յօգուտ ազգին։

«Առ այժմ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՐՇԱԼՈՅՍՆ՝ իբրև թարգման երախտագէտ զգացմանց Զմիւռնոյ Հայ ժողովրդեան, իւր խորին շնորհակալիքն կը յայտնէ յիշեալ ազգային բարերարաց, և կը բարեմաղթէ որ նոցա բարեգործական ուրիշ զանազան դիտաւորութիւնքն ևս կարճ ապագայի մը մէջ՝ ի գործ դրուին ի պարծանս և՝ ի յաւիտենական յիշատակ Սբարդալբեան գերդաստանին։ Յիշեալ մեծաշուք էֆէնտիներն՝ արդէն ընդհանուր մարդասիրութեան ոգիէ շարժեալ, բոլոր ազգաց օգտակար և տէրութեան շահուցն նպաստաւոր գլխաւոր բարեգործութիւն մի բրած են, այն է Պուճա գիւղին կառագնաց ճանապարհին հաստատուն շինութիւնն, որոյ համար՝ լսածնուս նայելով, հետզհետէ 6–7 հարիւր հազար ղուրուշ ծախք բրած են՝ ի միջոցի մի քանի ամաց»։

—

Յիշեալ լրագրոյն մէջ կարդացինք նաև հետևեալն։

«Ի Թիֆլիզէ Յուլիսի 30 ամսաթուով առ մեզ գրեալ նամակէ մի զհետևեալն քաղեմք։

«Ի 4 և յ՚7 ամսոյս վսե. փոխարքայն

Կովկասու յայց ելեալ Մայր աթոռոյն մեր-
ոյ մեծապէս պատուասիրութիւն գըտ-
եալ է 'ի վեհափառ Հայրապետէն և 'ի
Միաբանից Ս. Էջմիածնի ։

« Աստանօր մեծաւ եռանդեամբ հա-
ւաքի արծաթ բաղում յօժանդակութիւն
2500 դերդաստանաց դաղթելոց 'ի Նո-
րուսմն յՕսմանեան Հայաստանէ » ։

—

Սպարթալբեան վսեմ. եղբարց մեծա-
գործութեան վրայ Արշալուսոյ գրած վե-
րոյիշեալ տողերն օրինակելէն յետոյ, գո-
հութեամբ իմացանք թէ Պատրիարքա-
րանն ալ ըսելով՝ փութացեր է շնորհա-
կալեաց գիր ուղղել անոնց, ի դիմաց
ընդհանուր Ազգիս, ինչպէս պարտ և ար-
ժան է ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատերազմական վայրերէն՝ և մասնա-
ւորապէս Բլէվնայի կողմէն պաշտօնական
հեռագիրք՝ քանի մ'օր դադարելէն յե-
տոյ՝ սկսան գալ և հրատարակուիլ, ո-
րոնք միաձայն կհաստատեն ռուսաց մեծ
զօրութեամբ և շուրջանակի Բլէվնայի վը-
րայ յարձակիլն. բայց դարձեալ յաջողու-
թեան երես չեն տեսեր, և անդամ մը
8000ի չափ կորուստ ունեցեր են ։ Այսու
ամենայնիւ, դեռ պատերազմը կշարունա-
կեն ամենայն զօրութեամբ ու յամառու-
թեամբ ։ Ինչպէս եւրոպական հեռագիր-
ներէ ալ պիտի տեսնուի, Եւրոպա գո-
վեստիւք կխօսի օսմանեան զօրաց քաջու-
թեան վրայ, և Ռուսիոյ պարտութիւնն
ու ի սկզբան ունեցած ծայրագոյն վստա-
հութիւնը բաղդատելով այժմ՝ չարաչար
կմեղադրեն զինքը ։

Ընդհանրապէս կարեւորութիւն չտը-
ուիր Լօֆչայի ռուսաց կողմանէ գրաւ-
ման, հաստատելով թէ այս պատերազ-
մին մէջ օսմանեան զօրաց թիւն 8000 ի
չափ է եղեր, մինչդեռ ռուսք եռապա-
տիկ թիւ ունին եղեր. այսու ամենայ-
նիւ օսմանցիք ամենայն ուժգնութեամբ
դիմադրեր, և մինչև իսկ գիւղաքաղա-
քին մէջ քաջութեամբ պատերազմելէն
ու ռուսաց մեծ կորուստ տալէն յետոյ՝
կանոնաւորապէս ետ քաշուեր են ։

Շիպկայէն Սիւլէյման փաշայի կողմա-
նէ ալ հեռագրեր կան ։ Առջի օրը լուր
տուած էր թէ Շիպկայի կատարն եղող
երևելի ամրութիւններէն մէկն, Էսօթի-
Նիքօլա ըսուածն, օսմանցիք գրաւեցին.
բայց երէկ հեռագրած էր, թէ ռուս-
սերն խիստ մեծ զօրութեամբ յարձա-
կեցան՝ յիշեալ ամրութիւնն վերստին գը-
րաւելու համար, և թէև կայսերական
զօրքը տարապայման կերպիւ դիմադրեց
և ռուսք անթիւ կորուստ ունեցան. սա-
կայն իրենք նկատելով թէ ռուսք բազ-
մաթիւ են, հարկ եղաւ կայսերական
զօրքը կանոնաւորապէս ետ քաշել նոյն
ամրութենէն, որպէս զի մեր կողմն ալ
ռուսաց պէս մեծապէս չվնասուի ։

—

Օգոստ. Սուլթանը իւր թիկնապա-
հաց միջոցաւ պարգեւներ ղրկեց՝ պա-
տերազմական վայրերը գտնուող հրամա-
նատարաց տիկնայց, դոհ ըլլալով նոցա
բարւոք ծառայութենէն ու փութաջա-
նութենէն ։

—Երկուշաբթի օրը, 30 ի չափ ռուս
դերիք, որոց երկուքը սպայ են, մայ-
րաքաղաքս բերուելով՝ զինուորական
պաշտօնատունը փոխադրեցան ։

—Բժիշկ մը պիտի ղրկուի Լեմնոս, ուր
նախորդ Սերտարն, զինուորական գոր-
ծոց նախարարն և այլք կգտնուին ։

— Հայտարարատի մահմետական գըլ-
խաւորաց ոմանք և ժողովուրդն 140
հազար ֆրանգ հանգանակեր են, ի նը-
պաստ օսմանեան վիրաւորաց ։

— Վիէննայի օսմանեան նորընտիր
դեսպան Էսատ պէյ՝ երկուշաբթի մայ-
րաքաղաքս եկաւ իշխիրէն ։

— Բ. Դրան կրօնական դիւանին տնո-
ւրէն Զիվէր պէյ երկուշաբթի օրը Այնո-
ւրոշ ուղևորեցաւ, տեղւոյն յունական վա-
նորէից վիճակն քննելու համար ։ Դիւա-
նին գլխաւոր անդամներէն Սերվէթ է-
ֆէնտի պիտի փոխանորդէ մինչև ցվե-
րադարձ նորին ։

— Բէշթի, և Հունգարիոյ ուրիշ քա-
ղաքաց եկեղեցեաց մէջ, կըսէ Հագի-
դաթ, բարեմաղթութիւններ եղեր են՝
օսմանեան զինուց յաջողութեան ու յաղ-
թութեան համար ։

— Պէպէք Սաատէթ Հանըմի տունը
սպասաւորութիւն ընող վանեցի Մանուկ
անցեալ հինգշաբթի գիշեր ընկերին դա-
նակն առնելով պարանոցը ճեղքեր և ինք-
զինքը սպաննել ուզեր է. սակայն չէ
կրցեր և իմացուելով Եէտիգուլէյի հի-
ւանդանոցը փոխադրուեր է ։ Պատճառն
հարցուած ատեն, ըսեր է թէ հայրենի-
քը 15000 ղշի չափ պարտք ունենալն, և
իւր ալ անձնապէս վատառողջ ըլլալն է ։

— Կէյվէի Ղուրտպէլէն գիւղէն սեպ.
3 թուով գրուած է հետևեալն ։

« Նախորդ ամսոյ վերջերն յանկարծ
ահագին փոթորիկ մ'եկնելով՝ խոշոր կար-
կուտ և ապա յորդառատ անձրև մ'ե-
կաւ. առուակներն յորդելով՝ անհաս-
տատ տուներն տապալեցին. բարե-
բաղդաբար մարդոյ կորուստ չկայ.
բայց տանց՝ պարտիզաց՝ այգեաց՝ ան-
դաստանաց, մանաւանդ անասնոց մեծ
կորուստ եղաւ, յորոց բաղումք չանթա-
հար գլորելով մահացան. այգիք դրե-
թէ թէ գոսացան, մերկ ի պտղոց, ողկուզաց ճիւռք հողոյն տակ փտեցան. այսպէս հողագործին վաստակաբեկ ձե-
ռինք ի ծոց փակեցան » ։

ԱՐՑԱԽԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունաստանի կառավարութիւնը
հրամայեր է սահմանագլխի պաշտօնա-
կալաց, որ օսմանեան սահմանն անցնելու
և խռովութիւն յարուցանելու կասկած
տուող անձինքն շուտով ձերբակալեն և
ղէնքերնին դրաւեն ։

— Անդղիոյ ծովային նախարարն հրա-
մայեր է այս անդամ երեք զրահաւոր ալ
սպառազինել, Պէշիքայի նաւատորմիղին
վրայ աւելցուցնելու համար ։

—Ռուսիոյ կառավարութիւնն այս օ-
րերս 11 միլիոն բուպլիի նոր թղթա-
դրամ ալ շրջաբերութեան հաներ է ։

—Յունաստանի կառավարութիւնը մին-
չեւ ցարդ 50 հազար Շասբօ հրացան դը-
ներ է Պավիէրայէն և Վիրթէմպէրկէն ։

—Աւստրիական լրագիրք դրած են,
թէ բաղմաթիւ ռուսք գերմանական
սահմանը կանցնին, զինուորութենէ փախ-
չելու համար ։

—Գերմանական լրագիրք դրեր են,
թէ Միջերկրականի գերմանական նաւա-
տորմղին հրամայուեր է՝ Գերմանիա քաշ-
ուիլ ։

—Բլէվնայի ներկայ պատերազմէն յե-
տոյ, ի՛նչ որ ալ ըլլայ, թէ՛ յաղթութիւն
և թէ՛ պարտութիւն, Աղեկսանդր կայս-
րը՝ գահաժառանգն և Վլատիմիր արշի-
դուքսն Բեդրսպուրկ պիտի դառնան,
և Նիքօլա արշիդուքսն և այլք պիտի
մնան պատերազմական վայրերը ։

—Թայմզ՝ Պէլկրատի թղթակցէն առ-
նելով գրած է հետեւեալն։ – «Քաղաքա-
կան ակումբներու մէջ կըսուի, թէ Պէլ-
կրատի գերմանական հիւպատոսը Միլան
իշխանին հետ յաճախ կտեսնուի և կը
խորհրդակցի ։ Կհաւատան, թէ Գեր-
մանիա երբէք չպիտի հակառակի՝ Սեր-
վիոյ պատերազմի մասնակցելուն, և ա-
պահովութիւն տրուած է իրեն՝ Սերվիոյ
ներկայ վիճակն անփոփոխ պահել, ե-
թէ յաղթուի ։ Կկարծուի թէ Իտալիա
ալ Գերմանիոյ համաձայն է այս մասին ։
Աւստրիա դեռ ամենայն զգուշութեամբ
կշարժի » ։

— Հնդկաստանի մէկ քանի կողմերը
տիրած սովուն ծանրութեան վրայ անգ-
ղիական լրագրաց մէջ խիստ սրտաճմլիկ
լուրեր կհրատարակուին ։ Շատերը անօ-
թութենէ կիյնան կմեռնին, և փողոցնե-
րէն դիակները վերցուելու համար մեծ
նեղութիւն կկրէ կառավարութիւնը ։
Քաղաքներուն մէջէն այսպէս դիակները
կվերցուին, բայց կարելի չէ դուր-
սերը քայլ մ'առնել, առանց երբէք
դիակի մը պատահելու ։ Մօտերս դա-
տարանին ներկայացեր են երկու անձինք՝
որոնք անօթութենէ մեռնողներուն դիակ-
ները կերեր են ։ Հաստատուեր է սոցա
յանցանքը, բայց դատարանը չէ կրցեր
որևէ պատիժ տնօրինել, և ազատ ար-
ձակեր է զանոնք՝ պատուիրելով որ ու-
րիշ անգամ այսպիսի յանցանաց մէջ չը
դտնուին ։ Միւս կողմանէ ալ կառավա-
րութեան ծանուցուեր է այդ ծանր ե-
ղելութիւնը ։ Ժողովուրդէն բաղմաթիւ
անձինք լեռները իբրեւ անասուն կթա-
փառին՝ իրենց ուտելիք հայթայթելու
համար ։ Ինողք անօթութեան պատճա-
ռաւ կհարկադրին վաճառել իրենց ոդե-
հատոր որդիքն ։ Կառավարութիւնը լը-
սելով պատուիրեր է որ զգուշանան որ-
դեվաճառութենէ, ապա թէ ոչ՝ ծան-
րապէս պիտի պատժուին ։ Կանայք և
տղայք ձիոց աղբերուն մէջ դարիի ան-
մարսելի հատեր որոնելու կելնեն, և ե-
թէ չգտնեն՝ նոյն իսկ աղբերն կուտեն ։

Կառավարութիւնը սովելոց խնամտա-
նելու համար թէև շատ զոհողութիւններ
կընէ. բայց բաւական չէ, և հարկ կըլ-
լայ օգնութեան միջոցներն ընդարձակել.
ապա թէ ոչ՝ միլիոնաւոր անձինք սովա-
մահ պիտի կորնչին ։

—Անցեալ շաբթու հեռագիր մը՝ վախ-
ճանեալ Թիէրի կողմանէ անգղիացի բա-
բեկամի մը ուղղեալ նամակ մի յիշած էր ։
Ահաւասիկ, այս անգամ նոյն նամակին
պատճէնը կտեսնուի, որ է հետեւեալն ։

« Աւասիկ օսմանցիք յաղթական կհան-
դիսանան ։ Եւրոպա արդարութեամբ չէր
վարուեր Թուրքիոյ համար. բայց ար-
դարութիւնն ու ընդհանուր հաւասա-

բակշռութեան ճշմարիտ չահերն՝ օսմանցւոց հետ էին։ Թուրքիոյ բարձի թողի ըլլալուն վրայ մեծ ցաւ պիտի զգայուի. այս խօսքը կարտասանեմ հեռատեսութեամբ ի փառս արդարութեան. ապագայ խաղաղութիւն մը կ՚յուսացուի, սակայն պատճառները չեմ տեսներ. որովհետև ռուսք առաւել պարտութեան քան թէ յաղթութեան մէջ յամառ պիտի ըլլան։ Կնկատեմ, թէ ներկայ պատերազմը բաւական չպիտի ըլլայ Արեւելից անդորրութիւնը վերահաստատելու, և կվախնամ թէ առաջիկայ տարի երկրորդ պատերազմ մը տեղի պիտի ունենայ »։

—Փարիզի մէջ հրէից կառուցած սինակոկայի մը շինութիւնն այս օրերս աւարտեր, և մեծ հանդիսիւ բացուեր է։ Այսու չորս կըլլայ Փարիզի հրէական Սինակոկաններուն թիւը։ Այս վերջինին համար 700 հազար ֆրանգ ծախք ըրեր են։ Մեք, Փարիզի մէջ 700 ֆրանգով շինուած մատուռ մ՚ալ չունինք. մեք մեծ մե՛ծ ջարդել ունիմք . . .։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Վիէննա. 14 սեպ։— Պաշտօնական լրագիրն կհրատարակէ, թէ Աւստրիոյ կայսրը Ռուսիոյ կայսեր տարեդարձին օրը արտասանած ատենախօսութեան մէջ զԱղեկսանդր կայսրը «բարեկամ» միայն անուանած է, և «դաշնակից» բառն երբէք բերնէն ելած չէ։

Աթէնք. 15 սեպ։— Նախարարաց գլուխ ծովապետ Քանարիս մեռաւ։ Ժողովուրդը մեծապէս ցաւեցաւ։

16 սեպ։— Գանարիսի յուղարկաւորութեան հանդէսը մեծ շքով կատարուեցաւ։ Մեծ բազմութիւն կար. այս առթիւ շատ ատենախօսութիւններ եղան։ Թագաւորին հրամանաւ, բոլոր հելլենք 5 օր սուգ պիտի բռնեն։

Լրագիրք յայտարարութիւն մը հրատարակեցին, որ ստորագրեալ է բազմաթիւ կրետացիներէ, և որով գոհունակութիւն կայտնեն օսմանեան կառավարութեան համար։

Լոնտրա. 17 սեպ։— Մեծ տպաւորութիւն ըրին՝ ԲլէՇայէն հոս եկող հեռագիրք։ Համայն լրագիրք, նոյն իսկ Ռուսիոյ կուսակիցք կհաստատեն՝ ԲլէՇայի վրայ ռուսաց ըրած յարձակման բոլորովին ապարդիւն ըլլալը, և օսմանեան զօրաց քաջութեան ու արժանեաց վրայ գովեստիւք կխօսին։ Սթանտար լրագիրն այս առաւօտեան թերթողն կըսէ, թէ ռուսիա արեւելեան խնդիրն առանձինն լուծելու ելնելով՝ իւր ունեցած զօրութեան վրայ չափազանց վստահութիւն ունեցած է։

Բէշթ. 15 սեպ։— Ազգային ժողովոյն մէջ շատ հարցումներ եղան արեւելեան խնդրոյն վերայ։ Պ. Հէլֆի՝ օսմանեան ընթացից դէմ ազդարարութիւն ընելու համար Աւստրիոյ միանալուն համար կհարցունէ։ Պ. Էրօնի՝ Սերվիոյ պատերազմի մասնակցելուն վրայ բացատրութիւն կուզէ։ Պ. Սիմօնի՝ Ռուսիոյ և Թուրքիոյ կառավարութեանց նկատմամբ Աւստրիոյ ունեցած քաղաքականութեան վրայ տեղեկութիւն կորոնէ։ Պ. Թրանի ալ՝ Աւստրօ-Հունգարիոյ, և Գերմանիոյ ու Ռուսիոյ մէջ միաբանութիւն մ՚ըլլալ ու չըլլալը կուզէ իմանալ։ Վերջապէս Պ. Լուիս Սիմօնի՝ երեք կայսերաց դաշնակցութեան և ընդհանրապէս վերջնական որոշում մ՚ըլլալուն կամ չըլլալուն վրայ ծանօթութիւն կուզէ։

Պէրլին. 15 սեպ։— Կէս պաշտօնական լրագիրք, ինչպէս նաև Նասիօնալ Ցայթունկ կգրեն, թէ Գերմանիոյ կառավարութիւնը ո՛րևէ կերպիւ ազդեցութիւն ի գործ դրած չէ՝ Սերվիոյ և Ռումանիոյ պատերազմի մասնակցութեան որոշման ժամանակ, և թէ՝ այդ մասին եղած բանակցութեանց ալ միջամտած չէ։

Փարիզ. 16 սեպ։— Ֆիկարօ լրագիրը կըսէ, թէ գաղղիական լրագրաց մէկ մասն՝ օսմանցւոց դէմ անիրաւեցան։ Օսմանցիք՝ որոց սպառազինութիւնն ու պիտոյքը կատարեալ չէ, շատ մը յաղթութիւններ ըրին, և աշխարհի առաջին կարգի զօրաց հաւասարեցան։

Վիէննա. 15 սեպ։— Մասնաւոր հեռագրաց նայելով՝ Ռուսիոյ կայսրը՝ ԲլէՇայի ներկայ պատերազմին մէջ ալ ռուսաց մեծ կորուստ ունենալը լսելուն պէս, երկու անգամ ծանր կերպով մարեր է։

Ըստ Ֆրամտէմպլատի՝ ռուս զօրաց մէջ գտնուող աղնուականք զինուորական հնազանդութիւն չունին, և զինուորական կրթութիւնը իբրեւ ցոյց կընեն. և այս՝ Ռուսիոյ վնաս կպատճառէ։

16 սեպ։— Անտրասի կոմսն դարձաւ հոս։ Կկարծուի, թէ առաջիկայ չորեքշաբթի օրը (այսօր) պիտի տեսնուի Պիզմարդ իշխանի հետ։

Պէլկրատ. 16 սեպ։— ԲլէՇայի օսմանեան յաղթութիւնը՝ սերվից համարձակութիւնը անցունելով, նոցա շարժման խափանարար եղած է։

Պուքրէշ. 16 սեպ։— Հասարակութեան մէջ յուզումն ու զայրոյթ կայ ընդդէմ կառավարութեան՝ ոմանց ձերբակալութեան պատճառաւ։

—

Եւրոպական լրաբերներէն՝

Պուքրէշ. 6 սեպ։— Անցեալ գիշեր Թուրքերը բազմաթիւ նաւակներով Գալաֆաթի մօտ ցամաքն ելնել փորձեցին, սակայն Ռումանիացւոց արձակած ռումբերէն ստիպուեցան ետ քաշուիլ։

Բեռլրսպուրկ. 5 սեպ։— Լրագիրք կծանուցանեն, թէ Պուլղարիոյ քաղաքային վարչութիւնը 15 օրէ հետէ Սգիւտէնի փոխադրեցաւ։ Խորհուրդ կըլլայ՝ Ֆրաթէշթիի և Բարաբանի մէջ երկաթուղի մը շինել, ինչպէս նաև Եանթրայէն մինչեւ Թրնօվա, որոյ համար երկրաչափք ծրագրեր կպատրաստեն։ Դանուբի երթեւեկը շոգենաւով պիտի ըլլայ. Բեռլրսպուրկի փողերանոցը օրը 160 հազար արծաթ ռուբլի կկտրէ Դանուբի բանակին համար։

Պէլկրատ. 4 սեպ։— Ամեն օր զինուորական ժողովներ կգումարին ընդ նախագահութեամբ իշխանին. պատերազմի մը յատակագծին վրայ կվիճաբանին։ Հորվաթովիչ՝ Վիտինի, Լէշանին՝ Նիշի, և Նիքօլիչ՝ Սէնիցայի վրայ պիտի յարձակին։ Տիբինայի բանակը պաշտպանողական պիտի մնայ։ Հրաման եղած է, որ բոլոր սպայք պատրաստ գտնուին մինչեւ սեպ. 16։

Լոնտրա. 4 սեպ։— Կարինէն սեպ. 3 թերթով հեռագրեր են առ Տէյլի Նիուզ, թէ պատերազմական մեծ գործողութիւնք ժամէ ի ժամ կսպասուին։ Օսմանցիք կպատրաստուին՝ Աղեկսանդրապոլի վրայ յարձակիլ։

Պէլկրատէն ալ միևնոյն թերթով առ թայմզ հեռագրուած է, թէ սեպտ. 11ին մեծ ժողով մը պիտի գումարի ի Պէլկրատ, և թէ Ռուսիա հեծելազօր պիտի մտցունէ ի Սերվիա։

Բակուզ. 9 սեպ։— Գարատաղի ժողովոյն մեծագոյն մասն տրամադիր է՝ Նիքսիչի բերդը հիմնայատակ ընել։ Բերդին մէջ գտնուող օսմանեան զօրաց թոյլ տրուեցաւ՝ կաչքօ երթալ, Տուկայի կիրճէն անցնելով։ Բազմաթիւ օսմանցի ընտանիք ալ զօրաց հետ չուեցին։

Կարին. 8 սեպ։— Ռուսք Աղեկսանդրաբօլէն պաշարման ծանր թնդանօթներ ղրկած են Պալտըրվան, և տրամադիր են ինքզինքին պահպանել Ահմէտ Մուխթար փաշայի յարձակմանէն։

Տ. Ղուկասոֆ զօրավարն իւր զօրութիւնը կստուարացունէ, որպէսզի Երեւանու դաշտորայքը տանող պողոտաները պահպանէ։

Կ. Պոլիս. 7 սեպ։— Անցեալ տարի Սէլանիկի հիւպատոսաց սպանման սատարող երեք հոգի՝ որք ի Վիտին բերդարդելութեան դատապարտուած էին, Սէլանիկի մէջ արձակ համարձակ պտըտելնուն համար՝ գերմանական ու գաղղիական դեսպաններն ծանուցագիր մ՚ուղղեր են Բ. Դրան, բայց իմաստը տարբեր է եղեր։ Գերմանական ծանուցագրոյն վերջը գրուած է եղեր, թէ գերմանական կառավարութիւնը պիտի հարկադրի ուրիշ միջոց ձեռք առնուլ, եթէ դարձեալ այսպիսի եղելութիւններ շարունակեն։

Վաշինկթըն. 9 սեպ։— Ամերիկայի ներքին գործոց պաշտօնատան դրօշակն երեկ կէս պարզուեցաւ ի նշան սգոյ մահու Թիլերի։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Սեպտ. 7

Քօնսօլիտէ			10-50
Սօսիէթէ ժէնէրալի բաժինք	Անգ. լիր.		2-20
Քրէտի »	»	Օսմ. »	1-20
Երկաթուղեաց՝	»	Ֆր.	27½
Թրամուէյ		Օսմ. լիր.	1-25
1863ի փոխառութիւն		Ֆր.	45
1865ի »		»	46-
1869ի »		»	45-
1872ի »			22-50

ԴՐԱՄՔ, Օսմ. լիրան 100 էն

Մէճիտիյէ	104-35	Ռուսիոյ բօլ	88-50
Մէթալիք	118-	Գաղղ. լիրա	87-50
Պղինձ	160	Անգղ. »	110-
Թղթադրամ	179-50	Գրիմից	51-20

Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ԳԻՇԵՐՕԹԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ ՅԱՐՄԱՇ

Օգոստոս ամսոյ հինգերորդ օրը վարժարանիս արձակուրդի ժամանակը լրացաւ, բայց աշակերտք հազիւ մէկ երկուք վերադարձան, որուն պատճառ կերևի թէ երթեւեկութեանց համար ճանապարհի կասկածները և ժամանակի ձախորդութեանց հետզհետէ ծանրանալը պիտի ըլլայ։

Կը յայտարարեմք թէ՝ Ս. Ղեւոնդեանց վարժարանս բարեկարգեալ և հետևապէս արդիւնական վարժարան մ՚ըլլալու համար, բացմանէն մինչև ցայսօր ամեն շահ միայն համարելով իրեն՝ ազգին դաւակաց դաստիարակութիւնը։ Սակայն եթէ ծնողաց մեծ մասն ո՛և է կասկածներով զաւակնին չպիտի ղրկեն, ինչպէս մինչև ցայսօր, տարակոյս չկայ թէ վարժարանը միայն ժառանգաւորաց համար բաց պիտի համարուի։

Թոշակաւորաց համար, յայտարարութեանս թուականէն սկսեալ տակաւին 10 օր ալ կսպասեմք, և այս միջոցին կը հրաւիրեմք ծնողքները որ օր յառաջ փութան վանքին միաբաններէն արժ. Գէորգ վարդապետի հետ բանակցիլ՝ որ կը գտնուի Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին ամեն օր ժամը 5 էն մինչև 10։

Պէտք է գիտնան ծնողք որ երթեւեկութեանց համար ճանապարհի վտանգները ապահովելու հոգ պիտի տարուի և քիչ թոշակաւորներով ալ վարժարանը բարեկարգ պահելու համար բնա՛ւ ծախք պիտի չ՚ենայուի, միայն թէ աշակեր-

տաց թիւը գոնէ 30 էն չ'պակսի։

Կ. Պոլսէն և այլ քաղաքներէ փոքր ինչ հեռաւորութիւնը թէև ոմանց համար անհաճոյ թուի, սակայն կերպ մը բարիք է ծնողաց աչքէն և զբօսալից վայրերէ հեռի՝ անփոփ և անզբաղ մտօք միայն ուսման պարապելու կողմանէ։

Կարևոր ուսմանց տեսակներուն ամենը, և լեզուներէն միայն հայերէն, դաշղիերէն և տաճկերէն կ'աւանդուին։

Աշակերտաց կեանքն ու առողջութիւնը խնամով պահպանելու համար, վարժարանս իւր մէջ յատկապէս մշտընջենաւոր բժիշկ կը պահէ վկայեալ և յաջողակ և բաւականաչափ դեղարան։

Աշակերտին տարեկան թոշակն է 32 լիրա օսմանեան, որոյ մէջ են երթևեկութեանց, թղթատարութեանց և սովորական ադանելեաց ծախքէն զատ՝ ուրիշ բոլոր ծախքերը։

1877 Օգոստ. 31 Խորէն Եպիսկոպոս
ի Ս. Կ. վանս Յարմաշ Հ. վանից Արմաշու

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՆԱԽՆԱԿԱՆ
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ
Ըստ վարդապետութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ
Ի ՊԷՏՍ ՆԱԽԱԿՐԹԱԿԱՆ ԴԱՍՈՒՑ
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

ԿՐԹԱԿԱՆ
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ
Ըստ վարդապետութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ
Ի ՊԷՏՍ ԶԱՐԳԱՑԵԱԼ ԴԱՍՈՒՑ
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

Յօրինեաց
Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ ՊԷՏ
Առաջարկութեամբ եւ Վաւերացմամբ
ԱԶԳ. ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ
Տպագրեալ հրամանաւ
Տ. ՆԵՐՍԻՍԻ Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻ Կ. ՊՕԼՍՈՅ

Մեր վարժարանաց թէ՛ նախակրթարանի և թէ՛ զարգացեալ դասուց աշակերտք մինչեւ հիմա չունէին այնպիսի քրիստոնէական մը որ կարող ըլլար նոցա մտքերը դոհացուցիչ կերպիւ լուսաւորել կրօնի վարդապետութեամբքն՝ ու սրբոտերնին կրթել Բարոյականի վեհ սկզբունքով։

Այս պակասը լեցընելու համար՝ Ազգային Կեդր. Վարչութեան Կրօն. Ժողովը խնդրած է Գեր. Տ. Խորէն Ս. Արքեպիսկոպոսէ Նար Պէյ՝ յարմարագոյն դասագրքեր յօրինել, որ բոլոր դպրոցաց մէջ և ամէն դասատուաց ձեռքը կրօնի և Բարոյականի առաջնորդող գործիներ լինին, աշակերտաց համար ալ հրահանգիչ լինելու ամեն հանգամանքներն ունենան։

Կրօնական ժողովոյն փափաքը լիովին կատարեցաւ։ Եւ, ինչպէս որ այս գործոց սկիզբը կը տեսնուի, Ամենապատիւ Սրբազան Պատրիարքը Հայրն ու Կրօն. ժողովոյ Բնիչ Ցանձնախումբն իրենց գոհունակութիւնն յայտնելով՝ կը վկայեն միանգամայն թէ քաջուսումն Հեղինակի գործերն ամենեւիմբ համաձայն են վարդապետութեան և աւանդից Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ. նոյնպէս և տպագրութիւն նոցա օգտակար յոյժ ի փառս Հայաստան Եկեղեցեաց և յուսումն ուխտի մանկանց վարժարանաց Ազգիս։

Այս գովեստները բաւական երաշխաւորութիւն են թէ՛ Սրբազան Հեղինակին իրական արժանեաց և թէ՛ սոյն Դասագրոց խնամօք և ընտրելագոյն ոճով յօրինուած ըլլալուն, որոյ համար՝ իբր տէր-հրատարակիչ՝ չխնայեցինք ոչ ծախք և ոչ աշխատութիւն, որպէս զի այս գերքերը յարմարաւոր պատկերօք և վայելուչ տպագրութեամբ ի լոյս ընծայուին։

Քաջալոյս եմք որ այս Քրիստոնէականները Ազգին ընդունելութեանը պիտի արժանանան, մանաւանդ կրթականը, որ ո՛չ միայն Դպրոցաց՝ այլ ընդհանրութեան ևս կարի օգտակար պիտի լինի, քանզի Ընտանեկան ընտիր հրահանգներ կը պարունակէ. որոց միջոցաւ միայն կը-նամք յուսալ՝ թէ օր մը մեր տուները նախնական դպրոցաց նմանելով՝ պիտի կարենան զուգընթաց քայլել վարժարանաց հետ և անոնց ընթացիցը նպաստել ըստ կարի։ Լուսաւորեալ Ազգերն ա՛յս միջոցով զարգացան, որ ցարդ անոր օգուտներն ալ կը վայելեն

Ճ. ԱՐԱՄԵԱՆ

Կը ծախուի դրավաճառաց խանութները

ԻՆ

Նախնական Քրիստոնէական	30 սանդ.
Կրթական Քրիստոնէական	80 »

Կեդրոնատեղին է փարիզու դրատունը, Զադմադ Ճըլար.-Յակոբեան խան թիւ 13։

Դպրոցաց համար մեծ քանակութեամբ գնողներուն՝ հարիւրին 10 զեղչ պիտի ըլլայ։

—

Պոլսոյ կամրջի գլխի պարագային նստող դրավաճառ Մատթէոսեան Էֆէնտի՝ այս անգամնոյն Պարտգային դիմացը Վալիտէի կալուածներէն 4 թիւ Օսմանեան դրատունը փոխադրեցաւ։

Դպրոցական ամեն տեսակ գիր, հայ. գաղ. և տաճ. լեզուօք չափաւոր գնով կգտնուին յիշեալ դրատան մէջ։

ԱՌ ԱՐԵԳԱԿՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ
Ֆ.Ի. Ղ.Ա.Ն.Ի.Ա.Ն.Ի.Ա.Ն.Ի